

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱԼՊԱՆԻԻ ԴՈՒՔԸՆ

Տարւոյս մարտի 28ին կաննի մէջ Ալպանիի դքսին յանկարծական մահն՝ կոնտրայի մէջ մեծ տպաւորութիւն դորձեց, և խորին ցաւ պատճառեց մեծին բրիտանից մէջ տարածուելուն պէս, յետագայ մասնական պարագաներով։

Մինչդեռ դուքսն նաւական խորհը քարանին պալատան սանդղէն արագ արագ վեր կ'ելնէր՝ սահեցաւ, և իյնալով աջ ծունկը վնասեց: Ուռայլ՝ երկելի բժիշկն, որ նորին վեհափառութեան ծառայութեան մէջ էր, մէկէն 'ի մէկ երկու փայտէ տախտակներով կապեց զծունկը, և զդուքսը տանել տուաւ կառով՝ 'ի նէվաստա զղեակը, որ բարձրաւանդակի մը վրայ շինուած է, և քաղաքին վրայ կը նայի, և չորեկ դաշիօնուիխա իջևանին մօտ է: Մէկէն անկողնոյն մէջ հանգչեցուցին, հանեցին կապանքները. իսկ ինքն որ և է նեղութեան միրով համերեց:

Լքագիրներ կարգաց, քիչ մ'ալ կարգացընել տուաւ, և զուարթ զիմօք խօսեցաւ: Ժամը վեցին մօտ քիչ մը թէյ առաւ, և երկու ժամ՝ յետոյ փոքրիկ ընթրիկ մ'ըրաւ, և յետոյ բաւական ժամանակ դարձեալ կարգաց: Ուռայլ բժիշկն, որ դքսին սենեկին մէջ կը ննջէր, կէս զիւերէն երկուք ու կէս ժամ՝ վերջը դքսին ծանր շնչառութենէն արթըննալով մօտեցաւ անկողնոյն, զինքը սաստիկ ջերմութեան մէջ դտաւ:

Ուստի մէկէն 'ի մէկ բէրսիվալ նա-

ւապետը կանչել տուաւ: Բայց օրհասական տագնապն կարճ տեեց, վասն զի դուքսն ն վայրկեան վերջը հոգին աւանդեց՝ բէրսիվալ նաւապետին բազկաց մէջ:

իսկ մահուան պատճառն կը համարուի արեան յորդութիւն մը յուղեղն՝ կաթուածի նշաններով:

* *

Լէորոլս իշխանն, դուքս Ալպանիի, կոմն Գլարանսի, իշխան Սպատոնիս — գոպուրկ — կոթայի, և դուքս Սափոնիոյ, ծնած էր յամին 1853, ապրիլի 7ին, ուստի և երեսներորդ տարին հաղիւ լրացուցեր էր:

Մկրտութեան ժամանակ կոչուեր էր Պելճիոյ թագաւորին անուամբ, որ հօրեղբայր էր թագուհոյն:

Ինքն իր եղբարց պէս կորովի բնութիւն շրնէր, այլ միշտ ֆափուկ կազմուածքով մնաց, և մեծ խնամոց պէտք ունէր:

Իշխանն Լէորոլս 1872ին Օքսֆըրտի համալսարանը մտաւ, և 1876ին վարդապետ 'ի բժշկութեան անուանեցաւ:

Եւ յամին 1874ին մինչգեռ յօքսֆըրտ կը գտնուէր՝ առաջարկ ներկայացաւ կրկին խորհրդարանացն, ըստ սովորութեան իրեն ժառանգական երկիր մը որոշուելու, և տասնըհինգ հազար անզիվական ոսկի տալու ամէն տարի:



ԼԵՈՅԱՆ ԻՐԻԱՆ, ԴՐԱԳԱ ԱԼՊԱՆԻ

Յամին 1874 յուլիսի 24ի նիստին մէջ, բնդհանուր խորհրդարանին զըլ-խաւորն՝ Տ'իզրայէլի, այս առաջարկը ընդունելով իշխանին վրայ գեղեցիկ ներբողեան մը խօսեցաւ, ինչպէս նաև Լորա Կուէնվիլ կը յիշեցընէր խորհրդականաց՝ թէ ինչպիսի յարատեռութեամբ իշխանն իւր բնական ձիբքերը կը մշակէր։

Այս անկեղծ և սրտաշարժ գովասա-նաց մէջ չկար իմաստ մը՝ որուն իշխանն արժանի լինէր, որը նաև յետոյ միշտ արդարացի երեւեցան իշխանին վարած հասարակաց և առանձնա-կան կեանքին։

Յիրաւի, յետ թողու համալսարժ-նը, իշխանն որչափ որ առողջութիւնն կը ներէր, մեծ մասն ունեցաւ հասա-րակաց կենաց շարժմանց մէջ, իրեն նպատակ ունելով արհեստից և ուս-մանց զարգացումը, միանգամայն և ժողովրդեան հանգիստը։ Այս նիւթիս վրայ խօսած ճառելն նշանաւոր են՝ զաղափարաց պարզ և ազգու բացա-տրութեամբ, և նիւթին վրայ տիրելով։

Այս դաղսափարներն միշտ բնական էին, և միշտ ճշմարիս։

Յամին 1881 Մայիսի 24ին, լրագիր-ներն կը ծանուցէին թէ թագուհին՝ Լէորոլուի կոմսին շնորհեր էր Անգլիոյ ֆարի շքանունը և թէ դուքս Ալպա-նիի մակղիը պիտի կրէր։

* *

Մի և նոյն տարին յունիսի 25ին Լէո-րոլս մտաւ Լորատերուն մէջ։

Ալպանիի դուքսն ամուսնացաւ Հե-լենէ-ֆրեդերիկէ-Ռուդուստուհի իշխա-նուհեցին հետ, որ է դուստր Վալտէր Բիրմինի իշխանին, և քոյր չողանտայի թագուհուցին։ Ամուսնութիւնն ըստ ա-մենային բարեբախտ եղաւ։

Վիկտորիա թագուհին իր նոր հրա-տարակած զըլեն մէջ կը յիշէ նոր ա-մուսնաց գալուստը՝ ի Բալմորալ, որ էր 'ի 13 սեպտեմբերի, Դէլ-Լէ-Քէպիլիք

պատերազմին տարեդարձն, և Լէո-րոլս դուքսն անդիմական յաղթական բանակին փառաց համար խմեց։

Յամին 1883ին, փետրուարի 25ին, դուքսն գուստը մ"ունեցաւ, որոյ ա-նունը Ալիծ-Մարիամ-Վիկտորիա-Աւ-գուստուհի դրին։

Դուքսն պատուական որդի, ամու-սին և հայր եղաւ։ Թագուհին մեծ հա-մարմունք ունէր իւր տուած խորհրդա-դոց վրայ, և շատ անդամ ինքն ան-ձամբ կը խնդրէր զայն 'ի գեսէն։

Դուքսն շատ կը սիրէր երեւելի մա-տենագրաց հետ խօսակցել, և խօսիլ դրոց և մատենագրաց վրայ։ Բայց իր տկար առողջութեան վիճակն շատ ան-դամ մաղձոտ մտածութեանց պատճառ կը լինէր։

Քաղաքական ունեցած գաղափար-ներն պահպանողական էին, եռան-գեամբ և ազգու կերպով կը բացատրէր զայնս, բայց և ուրիշներուն կարծիքը կը յարգէր։ Շատ կը փափաքէր իր երկրին ծառայութիւն մատուցանել, և մեծապէս կը ցանկար բանատայի կա-ռավարիչ դրուիլ։

Սակայն շատ տհաճեցաւ երբ մե-ծաւ շանիւթ թագուհուցին հաւանու-թիւնը առ այն ստանալէն վերջը, հա-սարակաց շահուց համար չյանձնուե-ցաւ իրեն այս պաշտաման կատարում։

Երածշտութիւնն շատ սիրելի էր ի-րեն, և գիտէր զանազան գործիներով նու ագել։

* *

Ալպանիի դուքսն թողուց զինգիւա՝ գարնան սկիզբը, առողջութեան հա-մար վնասակար կլիմայէն աղատելու, և ամառ ատեն 'ի կան հասաւ։

Ցաւով թողուց զինգիւա, վասն զի չէր կընար զդքսուհին մէկտեղ տանիլ, նորա յղի լինելուն պատճառաւ։ Եւ ահա այս պարագայն՝ կրկնակի վիշտ և վտանգ կը պատճառէ զքսուհւոյն։